

ՀԱՄՈ ԽԱԶԱՏՐՅԱՆ, ԼԵՎՈՆ ԽԱԶԵՐՅԱՆ

ՍԵՐՈՎԲԵ ԿԱՐՆԵՑՈՒ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

1965 թվականին Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային նյութերի ուսումնասիրության ժամանակ մեր ուշադրությունը գրավեց անկազմ և անանուն մի ձեռագիր. այն գրված է սովորական կապույտ թղթի վրա, սև մեյանով, ֆրանսերեն լեզվով, թղթի չափերն են՝ $34 \times 22,5$ սմ, էջերը հեղինակի կողմից համարակալված են՝ 1-ից 40. ձեռագիրը պահվում է Մատենադարանի արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի վավերագրերի մեջ¹: Դատելով ձեռագրում նկարագրվող դեպքերից և հեղինակի կողմից նյութի շարադրման մեջ հաճախակի կրկնվող «1812 թվական»-ից, դժվար չէ հետևել, որ գրության ժամանակը հենց 1812 թվականն է: Եթե նկատի չունենանք ձեռագրի տիպոգրաֆիկ և հեղինակի անվան անհայտացումը, ապա պետք է ասել, որ այն պահանջներ ու մեղ է հասել բավականին լավ վիճակում: Դա ուղեգրություն է՝ Բաղդադից էջմիածին անցած մի հայ ճանապարհորդի կողմից գրված: Ե՛րբ է անհայտացել այդ ձեռագրի տիպոգրաֆիկը, որի վրա ամենայն հավանականությամբ գրված է եղել Ուղեգրության հեղինակի անունն ու մականունը, — անհայտ է: Այդ ձեռագրի մասին աղբյուրներում սրև է տեղեկություն չկա. միայն 1958 թվականին ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը իր՝ «Присоединение Закавказья к России и Международные отношения в начале XIX столетия» ուսումնասիրության մեջ, իրեն հետաքրքրող մի հարցի՝ անդր-իրանական հարաբերությունների պատմության լուսարանման առնչությամբ, հղում է արել այս ձեռագրին, համարելով այն Բաղդադում մահացած Հակոբ արքեպիսկոպոսի մի ուղեկցի հեղինակություն²: Իսկ տարիներ առաջ Մատենադարանի արխիվային բաժնի ֆոնդերի փաստաթղթերը նկարագրելիս այն ուղղակի վերագրվել է XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին Հնդկաստանի հայկական գաղթօջախներում մի քանի տարի էջմիածնի վանքի նվիրակի հանգամանքով գործած Հակոբ կրոնավորին: Հենց այդ ժամանակներից էլ այն գրանցվել է Մատենադարանի ցուցակներում «Հնդկաստանի Հակոբ վարդապետի ճամփորդական օրագիրը» վերնագրով:

Սույն ձեռագիր աշխատության հեղինակի հարցը վերջնականապես պարզելու համար, սակայն, անհրաժեշտություն էր դգաջվում բանասիրական ման-

* Տպագրելով սույն հաղորդումը Սերովբե Կարնեցու ձեռագիր (ինքնագիրը՝ ֆրանսերեն լեզվով) աշխատության մասին, մեր պատրաստած բնագրի հայերեն թարգմանության հրատարակումը թողնում ենք մի այլ առիթի:

1 Տե՛ս Մաշտոցյան մատենադարան, արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 23, ծրար 171:

2 А. Р. Иоаннисян, Указ. труд, էջ 337:

բակրկիտ հետախուզումներ կատարել տվյալ ժամանակաշրջանի արխիվային նյութերում, ամենից առաջ հշգրտել, թե Հակոբ վարդապետը (հետագայում արքեպիսկոպոս) ե՞րբ է եղել Հնդկաստանում և ինչպիսի՞ն է եղել նրա հակատագիրը:

Հակոբ վարդապետի իսկ վկայությամբ, նա որպես էջմիածնի նվիրակ, Հնդկաստան է գնացել Ղուկաս կաթողիկոսի հրամանով՝ XVIII դարի վերջերին, իր հետ պաշտոնակից ունենալով Վրթանես վարդապետ Աշտարակեցուն: Մաշտոցյան Մատենադարանում 3322 համարի տակ պահվող Հակոբ վարդապետի «Գիրք քարոզից» ինքնագիր ձեռագրի³ առաջարանում այդ մասին կարդում ենք. «Յաւուրս գերիշխանական պետութեան տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց, որոյ հրամանան գոլով ի Հնդիկս՝ վասն գործոյ նուիրակութեան սրբոյ Աթոռոյն:

Յամի փրկութեան մերոյ 1799 և թուականիս հայոց ՌՄԽԸ ի բազմամարդ աշխարհն Հնդկաց»⁴:

Մեզ հասած վավերագրերից իմանում ենք, որ հայրենիքից հեռու, օտար ափերում էջմիածնի նվիրակը այնքան էլ հանգիստ կյանք չի ունեցել: Այսպես, 1805 թվականին Հնդկաստանի Բոմբեյ քաղաքում նրա հորինած «Երգարան»-ի ընդարձակ առաջարանում, հեղինակը անդրադառնալով այն հանգամանքներին, որոնք հարկադրել են նրան զբաղվել երգեր գրելով, ասում է. «Գոլով մաշեցեալ բազում ամս անհանգիստ տառապանօք և աշխատութեամբ ի պանդուխտ և հեռաբնակ աշխարհի ի կողմանս Հնդկաց ի ծովու և ի ցամաքի, ոչ անդէս համարեցար հանգիստ տալ մերս մտաց և թշվառակիր անձին ի պէս պէս տրամութեանց և կսկծալի անակնկալ դիպածոց որք անցին զմեօք: Ուստի հարկ նդև մեզ յօրինել զբանի մը երգս զուարճալիս և ուրախարարս...»⁵: Ի դեպ՝ նրկատենք, որ «Երգարանում» ղետեղված 17 տաղերից մեծ մասում արտահայտված է հեղինակի՝ հայրենիքի հանդեպ ունեցած սերն ու կարոտը: Այդպիսիք են, օրինակ, նրա «Տաղ երգեալ ի դէմս սիրելոյ բարեկամի հեռացելոյ յերկիր անձանօթ», «Ի դէմս հեռաւոր բարեկամի», «Տաղ երգեալ ի դէմս վարդին և պիւպիւլին» և մյուս երգերը⁶: Առաջարանի վերջում հեղինակը խնդրում է ընթերցողին հիշել իրեն «իրք կոշեցեալ նուիրակ կողմանցն Հնդկաստանի զշարահիւսօղն երգոցս զՅակորոս... ընդ իս հաւասար վշտակից և ցաւակից, բազմաշխատ... զՎրթանէս հանճարիմաստ վարդապետն Աշտարակեցի»⁷:

Հնդկաստանի հայկական գաղթօջախում էջմիածնի օգտին հանգանակած նյութական մեծ հարստությամբ Հակոբ նվիրակը, Վրթանես վարդապետի հետ, հանապարհվում է դեպի էջմիածին: Հասնելով Բաղդադ, տեղեկություն է ստանում, որ էջմիածնում տիրում է խառնաշփոթություն և կաթողիկոսական զահին

³ Այս ձեռագիրը ամփոփում է իր մեջ Հակոբ վարդապետի երկու ինքնուրույն գործերը: Դրանցից առաջինը կրում է «Գիրք քարոզից» խորագիրը (թթ. 1—268), ուր տեղ են գտել հեղինակի 50 քարոզները՝ «Յօրինեալ ի Յակորայ նուաստ վարդապետէ...», իսկ երկրորդը «Երգարան» է, որը ներկայացնում է զեղարվեստական որոշ հետաքրքրականություն և արժանի է ուշադրության (թթ. 269—281): Այդ երգարանը հորինված է նույն Հակոբի կողմից՝ «1805 թուին ի Բոմբայի ի Հնդիկս»: Ձեռագիրն ունի նաև 12 տաղից բաղկացած շափաթո հիշատակարան, զբված՝ Վրթանես վարդապետի կողմից, որպես Հակոբ արքեպիսկոպոսի տապանագիր:

⁴ Ձեռ. N 3322, Թ. 1ա:

⁵ Նույն տեղում, Թ. 269:

⁶ Նույն տեղում, Թթ. 269—281:

⁷ Նույն տեղում, Թ. 270:

տիրելու համար պայքար է մղվում Գանիելի և Գավթի միջև: Այդ պայքարը, որը մեր պատմութեան մեջ հայտնի է Գավթի-Գանիելյան անունով, քաղաքական սուր բնույթ էր ստացել՝ ընդգրկելով Հայաստանն ու նրա սահմաններից դուրս գտնվող հայ գաղթօջախները: Մեր նպատակից դուրս է, անշուշտ, հանդամանորեն բնութեան առնել այդ իրադարձութիւնների հետ կապված հարցերը, սակայն նշենք, որ դա հեռու էր զուտ կրօնական բնույթի միջադեպ լինելուց:

Հայաստանը դարձել էր հակամարտ պետութիւնների քաղաքականութեան ասպարեզ, «ուր թեպետ որպես գործող անձինք երևում էին հայ գործիչները, սակայն ի ներքուստ ղեկավարում էին բոլորովին այլ հաշիվներ»⁸: Իրերի իսկական գրութիւնը պարզելու նպատակով նվիրակ Հակոբը երկու անգամ Վրթանես վարդապետին ղեպի երկիր է ուղարկում, նրա միջոցով էլ ուղղակի կապ հաստատում Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ (ապագա կաթողիկոս) Եփրեմի հետ⁹ և վերջինիս խորհրդով առժամանակ հետաձգում է իր մեկնումը դեպի էջմիածին¹⁰: Ապարդյուն են անցնում Հակոբ արքեպիսկոպոսին, հավաքած հարստութեան հետ, էջմիածին բերելու համար Գավթի կաթողիկոսի և պարսկական թագաժառանգ Աբրաւ-Միրզայի գործադրած ջանքերը: Նա շարունակում է մնալ Բաղդադում: Հենց այստեղ էլ 1809 թվականի հոկտեմբերի 21-ին, Հակոբ արքեպիսկոպոսը հանկարծամահ է լինում: Այս մասին նույն թվի հոկտեմբերի 26-ին, նրա վշտակից և ուղեկից Վրթանես վարդապետը հատուկ նամակով հանդամանորեն լուր է հաղորդում էջմիածնի Հոգևոր խորհրդին¹¹: Այդ է հաստատում նաև Հակոբ արքեպիսկոպոսի շիրմի տապանագիրը¹²:

⁸ Կ. Աղ ա ն յ ա ն ց, «Գիվան Հայոց պատմութեան», Թիֆլիս, 1893, հ. Ա, էջ 2:

⁹ Հակոբ նվիրակը Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսին իր վիճակի մասին նամակներ է գրել զեռ տարիներ առաջ: Այսպես, 1808 թվականի ապրիլի 15-ին Բաղդադից, Վրթանես վարդապետի միջոցով Եփրեմին հղած նամակում այդ մասին կարդում ենք. «Յառաջ բան զայս յանցեալ թիւ 1804 և ի նոյեմբերի 29 երկու միօրինակ թուղթս եմք մատուրեալ ի սպաս սրբութեան ձերոյ, մինն ձեռամբ պարսն Յովհան Աղարարովին և միւսն ի վերայ Պոլսոյ երեմիա Չելեպույն, յուսամ ըստ ժամանակին ընկալեալ իցիր և իմացեալ զգրեալս մեր ի նմին. վասն որոյ աստ շիրկնեմք զեոյնս» (Մաշտոցյան մատենադարան, Կաթողիկոսական գիվան, թղթ. 19, վավ. 34ա):

¹⁰ Մաշտոցյան մատենադարան, արխիվային բաժին, Կաթողիկոսական գիվան, թղթ. 19, վավերագրեր 34ա, 53, 59 և այլն:

¹¹ Նույն տեղում, թղթատանակ 21, վավ. 105ա և 105բ:

¹² Այն գտնվում է Մատենադարանում պահվող N 3322 ձեռագրի հիշատակարանում, էջ 282ա:

«Իմ Յակոբայ Արճի դի- տիս,
Հնդկաց երկրի նուիրա կիս,
Ի յաւարտիլ գործոյն որ չիս,
Չեռն Տեառն միեցաւ չիս,
Մինչ սուրբ դաճիս և ծնո- ղիս,
Եթող կարօտ ողորմե- լիս,
Ի ննջմանէս մինչ վեց ամիս,
Մնացի ի դաշտին Բարիլո- նիս,
Ապա շնորհի իմ որդե- կիս,
Տէր Վրթանէս վարդա(պե) տիս,
Տեղափոխեալ եղայ շիր- միս,
Հանդեայ գեհալս ի ծոց Հար սիս:—

Յամի Տեառն 1809, հոկտեմբերի 21, ի Բարիլուն»:

Այս բոլորից հետևում է, որ 1812 թվականին գրված Ուղեգրության հեղինակը չէր կարող լինել 3 տարի առաջ մահացած Հակոբ արքեպիսկոպոսը: Ավելին, եզակի դեմքով շարադրված Ուղեգրության առաջարանում էլ հեղինակը, Հակոբի մասին խոսում է որպես երեւոյ մի անձնավորության. այսպես. «Հակոբը, ողևորված Գանիելի վերահաստատումից, արամազրվում է գնալ էջմիածին: Սակայն վրա է հասնում մահը և կանխում իր մտադրությունը: Հետևապես նա մնացի մեճակ՝ Հակոբ արքեպիսկոպոսի գույլերի հետ միասին, անգլիացիների հովանավորության տակ»:

Կարելի էր, իհարկե, ենթադրել, թե այդ Ուղեգրության հավանական հեղինակը նվիրակ Հակոբ արքեպիսկոպոսի հետ Հնդկաստան ճանապարհորդած, նրա հետ «հաւասար վշտակից և ցաւակից, բազմաշխատ...» վրթանես վարդապետ Աշտարակեցին է: Սակայն մի կողմ թողնենք ենթադրությունները և դիմենք փաստերին:

Ինչպես դժվար չէ նկատել, Ուղեգրության հեղինակը եղել է գործին տեղյակ անձնավորություն, որը Հակոբ արքեպիսկոպոսի մահից հետո Բաղդադում նրա թողած հարստությունը էջմիածին հասցնելու հարցի շուրջը աշխույժ նամակագրություն է ունեցել հայոց նորրնախի Եփրեմ կաթողիկոսի հետ: Նա ճանաչված ու վստահված է եղել նաև Բաղդադի անգլիական դեսպանատան կողմից:

Այսպես, իր Ուղեգրության առաջարանում հեղինակը ասում է, որ երբ Եփրեմը էջմիածին հասավ՝ «ինձ գրեց, որ նրան բերեմ Հակոբ արքեպիսկոպոսի գույլերը...»: Այնուհետև, ավելի որոշակի դարձնելով իր ասելիքը, հեղինակը մատնացույց է անում նաև դեպի էջմիածին կատարած ճանապարհորդության ճիշտ թվականը: 1811 թվականի օգոստոսի 22-ին Եփրեմ կաթողիկոսի «Ինձ ուղարկած կարգադրությունը, — գրում է նա, — ես կարողացա իրագործել միայն հաջորդ դարնանը»: Ավելին, նա մանրամասնություններ է հաղորդում նաև այն մասին, որ իր «անվտանգության համար» ինքը Բաղդադից դեպի էջմիածին է ուղևորվել «որպես Հնդկական ընկերության... անգլիացի հանձնակատար...», օժտված լինելով անգլիական անձնագրով»:

Ուղեգրության առաջարանի այս ուշագրավ տեղեկությունները մեզ համար պրպտումների նոր ճանապարհ բաց արին: Այս կապակցությամբ որոնումներ կատարեցինք Մատենադարանի ֆոնդերում: Դրանցում արժեքավոր տեղեկություններ գտանք մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ, որոնք ոչ միայն հնարավորություն են տալիս մեկընդմիջա պարզելու Ուղեգրության հեղինակի անձնավորությունը, այլև ստուգելու փաստերի ճշմարտացիությունը, կատարելու հրատարակված պատմագիտական աշխատություններում տեղ գտած որոշ փաստերի ճշգրտումներ:

Արխիվային հավաստի փաստաթղթերը վկայում են, որ 1811 թվականի օգոստոսի 22-ին Եփրեմ կաթողիկոսի Բաղդադ ուղարկած կարգադրությունը ուղղված է եղել «արժանաւոր օրհնութեանց զգօնամիտ որդւոյ սիրեցելոյ պատուելի Սերոբէ վարդապետի Կառնեցոյ»-ն...¹³:

Որ իրոք, Եփրեմ կաթողիկոսը Սերովբե Կարնեցուն հրավիրում է էջմիածին, հաստատվում է նաև Սերովբեի իսկ 1812 թվականի հունվարի 22-ին Բաղդադից Հնդկաստան՝ Հարություն Սահակյան-Աղանուրյանց նոր Զուղաչեցուն

¹³ Մատենադարան, Արխիվային բաժին, ֆոնդ Ա. Երեցյանի, թղթ. 159, վավ. 59:

հղած նամակից: Հեղինակը հաղորդում է, որ Եփրեմ կաթողիկոսը իրեն «կոնդակ գրեաց և հայրական սիրով հրաւիրեալ խուճապեաց ելանել, դիմել անյապաղ ի սուրբ Աթոռն... զորոյ հրամանն սիրով ընդգրկեալ յետ միոյ հանդերձեալ եմ ընդ բարձրապատիւ եղբօր իմում Վրթանէս վարդապետին գնալ ի սուրբ էջմիածին»¹⁴:

Բաղդադում նվիրակ Հակոբ արքեպիսկոպոսի թողած հարստությունները էջմիածին, Սերովբե Կարնեցու միջոցով, տեղափոխելու փաստը հավաստի լինելու վերաբերյալ անառարկելի վկայություն է 1812 թ. մայիսին էջմիածին ներսես արքեպիսկոպոսին Բայազետից աղա Հակոբ Արծրունու հղած նամակը: Նամակի հեղինակը հաղորդում է, որ Սերովբե և Վրթանես վարդապետները իրենց բերած ապրանքներով Բայազետից ճանապարհ են ընկել դեպի էջմիածին. «Սուրբ աթոռի ընչիցն»¹⁵, — կարգում ենք այնտեղ, — դավաջով Զ (6) պեոն Բ (2) թէմպելիք ձիջով ճանաչարհ ձքիք...»¹⁶:

Այս տեսակետից ուշագրավ է նաև Եփրեմ կաթողիկոսի 1812 թվականի սեպտեմբերին Բաղդադի և Բասրայի անգլիական դիվանագիտական ներկայացուցիչ Կլավդիոս Զեմս Ռիչին գրած նամակը: Էջմիածնի վանքի՝ 1812—1820 թվականների գրադրությունների մատչանում պահպանված այդ նամակի համառոտ շարադրանքում կարգում ենք. «շնորհակալութիւն յաղագս դանաղան բարերարութեանց առ մեզ..., այլև շնորհակալութիւն վասն Սերովբէ վարդապետին, զոր մեք խնդրեցաք, և նա առաքեաց»¹⁷:

Մի քանի ամիս հետո՝ 1813 թվականի հունվարի 26-ին, Եփրեմ կաթողիկոսը մի այլ գրությամբ Հնդկաստանի հայ գաղթօջախի ազգային գործիչներին և էջմիածնի նոր նվիրակ Փիլիպոս արքեպիսկոպոսին ծանուցել է հետևյալը. «դի Հնդկաստանու նուիրակ հանգուցեալ Յակոբ արքեպիսկոպոսի հոգևոր որդի Վրթանէս վարդապետն... եկն եհաս ողջամբ և խաղաղութեամբ աստ ի սուրբ աթոռս հանդերձ ընչիւք մնացելովք, ընդ որում էր և զիտնականս վարդապետն Սերովբէ անուն, զորմէ գուցէ լուեալ իցես...»¹⁸:

Որ Ուղեգրության հեղինակը Սերովբե Կարնեցին է, անառարկելի է դառնում նաև հնագրագիտության ընձեռած տվյալներով: Այդ ուղղությամբ կատարած աշխատանքները միանգամայն դրական արդյունք տվեցին. ներկա ձեռագիրը համեմատեցինք Մատենադարանում պահվող՝ ուսական ցար նիկոլայ առաջինին, գեներալ Պասկևիչին, Լազարյան եղբայրներին և այլոց տարբեր ժամանակներում ֆրանսերեն լեզվով Սերովբե Կարնեցու գրած և ստորագրած փաստաթղթերի հետ. պարզվեց աներկրայորեն, որ դրանք գրված են միևնույն անձնավորության կողմից¹⁹:

Նկատենք, որ դեռ անցյալ դարի վերջերին վաստակավոր հայազետ Ալեքսանդր Երիցյանը իր «Կովկասահայր» աշխատության մեջ նույնպես հավաս-

14 Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 19, վավ. 8:

15 Էջմիածնի օգտին Հնդկաստանի հայ գաղթօջախներում Հակոբ նվիրակի հավարած հարստությունների ամբողջական ցուցակը տե՛ս Մատենադարանի արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանում, թղթ. 31, վավ. 227:

16 Կաթողիկոսական դիվան, թղթ. 23, վավ. 59, 68:

17 Նույն տեղում, թղթ. 44, վավ. 356, էջ 45:

18 Նույն տեղում, Ա. Երիցյանի ֆոնդ, թղթ. 159, վավ. 67:

19 Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 258բ, Լազարյանների արխիվ, թղթ. 104, գործ 8, վավ. 149 և այլն:

տում է, որ Հնդկաստանից Բաղդադ բերված էջմիածնի հարստությունը տեղ է հասցրել ոչ այլ որ, քան հենց ինքը Սերովբե Կարնեցին:

Սակայն հարկ է նշել, որ «Կովկասահայր»-ում Բաղդադից էջմիածին տեղափոխված հարստության աննշույթյամբ թույլ է տրվել փաստական երկու աննշույթյուն. առաջին՝ շփոթված է Հնդկաստանի նվիրակ Հակոբ արքեպիսկոպոսը Վրթանես վարդապետի հետ: Այսպես, այնտեղ կարգում ենք. «...Հնդկաստան նուիրակ ուղարկած Վրթանէս եպիսկոպոսը մեծ գանձով վերադառնալիս է եղել էջմիածին, բայց Բաղդադ հասնելով վախճանվել է...»²⁰ (ընդգծումը մերն է): Երկրորդ՝ թյուրիմացաբար հայտարարվում է, որ այդ հարստության տեղափոխումը Սերովբե Կարնեցու միջոցով, որպես թե, տեղի է ունեցել 1811 թվականին²¹: Մինչդեռ, իրականում, ինչպես երևում է նորահայտ արխիվային տվյալներից ու ներկա Ուղեգրությունից, այդ փաստը կատարվել է 1812 թվականի գարնանը: Նշված սխալները հետադաշում նույնությամբ կրկնվել են նաև 1931 թվականին «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրված Ռ. Աբրահամյանի՝ «Կարնեցի Սերովբե վարդապետի նամակները Ղրիմեցի Յովհաննէս վարդապետին» հոդվածաշարում²²:

Այսպիսով, վերը բերված փաստերը անհերքելիորեն հաստատում են, որ Հակոբ արքեպիսկոպոսի մահից հետո Բաղդադում թողնված հարստությունները էջմիածին է տեղափոխել Սերովբե Կարնեցին, ուղեկից ունենալով Վրթանես վարդապետ Աշտարակեցուն, ուստի և աներկբա է դառնում, որ Սերովբե Կարնեցու գրչին է պատկանում Ուղեգրությունը:

* * *

Սերովբե Կարնեցին²³ բոլորովին էլ անձանոթ անձնավորություն չէ մեր մշակույթի պատմության մեջ: Դեռ անցյալ դարի առաջին տասնամյակում հեռանալով Մխիթարյան միաբանությունից, նա դառնում է լուսավորչադավան. գալիս էջմիածին և ավելի քան երեսուն տարի՝ մինչև իր կյանքի վերջը, ակտիվ մասնակցություն է ունենում ժամանակի հայ քաղաքական-եկեղեցական ու մշակութային կյանքին՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, մասնավորապես Մոսկվայի, Պետրոգրադի, Աստրախանի հայկական գաղթօջախներում: Այդ են հաստատում ժամանակակիցների թողած նամակներում, պաշտոնական թղթերում, հայագիտական աշխատություններում ու Հայաստան այցելած օտար ճանապարհորդների ուղեգրություններում պահպանված ուշագրավ տեղեկությունները:

Սակայն նշենք, որ Սերովբե Կարնեցու մասին մեզ հասած տեղեկությունները խիստ հակասական են ու իրարամերժ: Նկատենք նաև, որ հետագա բանասերներից շատերը նույնպես Սերովբե Կարնեցուն գնահատելիս անկողմնակալ չեն եղել: Ասվածից անհրաժեշտաբար հետևում է, որ ժամանակն է աղը-

20 Ա. Երիցյան, Կովկասահայր, Թիֆլիս, 1894, հ. Ա, էջ 551—552:

21 Նույն տեղում, էջ 552:

22 «Հանդէս ամսօրեայ», 1931, № 1—2, էջ 72:

23 Նկատենք, որ արխիվային փաստաթղթերում 1814—1817 թթ. Սերովբե Կարնեցին ստորագրել է նաև «Իփեկեան» և «Արիստակեան» ազգանուններով, առանձին դեպքերում կցելով դրանց «Կարնեցի» մականունը (տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 104. Կավերագրեր 156, 160, 161, 177, 195 և այլն):

յուրների համակողմանի ուսումնասիրությամբ վերագնահատման ենթարկել նաև Սերովբե Կարնեցու անձն ու գործունեությունը: Սակայն տվյալ դեպքում դա մեր ներկա քննության սահմաններից դուրս է մնում: Միայն ասենք, որ եվրոպայում մեծացած, Հռոմում կրթություն ստացած, ապա կաթոլիկական դավանանքից հրաժարված Սերովբե գիտնական վարդապետ Կարնեցին մի քանի տարի Քաղզաղում հաջողությամբ կատարում էր անգլիական դեսպանի երեսանների դաստիարակի դերը:

Հակոբ նվիրակի մասվանից հետո Քաղզաղում անգլիական դեսպանատան հովանավորության տակ գտնվող հարստությունները էջմիածին ապահով տեղափոխելու համար ուղիներ էին որոնվում, և ահա հենց այդ ժամանակ էլ Սերովբե Կարնեցին դիմում է եփրեմ կաթողիկոսին՝ խնդրելով իրեն ընդունել Հայաստանյայց եկեղեցու գիրկը: Այսպիսով, գտնվում է այն հարմար մարդը, որը կարող էր Հակոբ նվիրակի կուտակած հարստությունները էջմիածին հասցնել: Ինչպես երևում է արխիվային փաստաթղթերից և Սերովբե Կարնեցու Ուղեգրության առաջաբանից, այդ գործում ակտիվ դեր է կատարել Քաղզաղի անգլիական դեսպանությունը: Հազիվ թե հարկ լինի կասկածելու, որ դա թելադրված էր անգլիական դիվանագիտության շահերով: Հայտնի է, որ 1809 թվականի անգլո-իրանական նոր պայմանագրի կնքումով Պարսկաստանում անհամեմատ ուժեղացել էր անգլիական ազդեցությունը: Սակայն շնայած դրան, անգլիական դիվանագիտությունը, ինչպես խոստովանում է անգլիացի դիվանագետ գեներալ Սըր Զոն Մակկոլմը, անհանգստացած էր այն քանի համար, որ «ռուսները, կարճ ժամանակի ընթացքում, Կովկասի հյուսիսից իրենց սահմանները տարածել էին մինչև Արաքսի ափերը»²³: Ուստի Ռուսաստանի ազդեցությունը այդ մասերում, եթե ոչ իսպառ վերացնելու, ապա գեթ թուլացնելու խնդիրը անգլիական դիվանագիտության համար առաջնահերթ նշանակություն ուներ: Դրան հասնելու նպատակով, անգլիական դիվանագետները ուղիներ էին որոնում Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի հետ կապեր ստեղծելու, հայ աշխարհիկ ու հոգևոր վերնախավին սիրաշահելու համար: Իրենց մտադրությունների իրագործման ճանապարհին ոչ միջոցներ էին խնայում և ոչ էլ խտրություն դնում կիրառվող մեթոդների մեջ, ամեն անգամ հրապուրիչ, կեղծ հավաստիացումներ տալով «Հայոց ազգը և եկեղեցին» հովանավորելու մասին:

Անգլիական (ինչպես և ֆրանսիական) դիվանագիտությունը ճիշտ գնահատելով, մի կողմից, պետականությունից զրկված հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կյանքում հայ հոգևոր կենտրոնի խաղացած դերը, մյուս կողմից՝ օգտագործելով թագավորության սահմաններում եղած հայ գաղթօջախների ուսուցանող հնարավորությունները, ջանում էին իրենց ազդեցությանը ենթարկել, էջմիածինը ու նրա միջոցով փոխել հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը, խզել հայ և ռուս ժողովուրդների միջև եղած դարավոր բարեկամությունը: Այս նպատակով նրանք մի շարք գործնական քայլեր կատարեցին՝ սիրաշահել փորձելով հայ աշխարհիկ ու հոգևոր վերնախավին: Այդ կարգի ձեռնարկումների մեջ բոլորովին էլ վերջին տեղը չէին գրավում հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներին տրված որոշ արտոնությունները և տնտեսական ծանր կացության մեջ գտնվող էջմիածինն նյութական օգնություն ցույց տալու միջոցառումները: Այսպես, իրավունք էր տրվում, իրենց գերիշխանու-

24 Հոգ. Հակոբյան, Ուղեգրություններ, 1934, Երևան, հ. 2, էջ 53:

թյան տակ գտնվող տերիտորիաներում եղած հայկական գաղթօջախներում, էջմիածնից եկած նվիրակների միջոցով կազմակերպել հանգանակություններ: Ավելին, «հոգատարություն» էր ցուցաբերվում նաև հավաքած այդ հարստությունները ապահով էջմիածին հասցնելու մասին: Ասվածը հաստատելու բազմաթիվ օրինակներ կան: Սակայն բավարարվենք միայն սույն Ուղեգրության և նրա հեղինակի հետ անմիջական առնչություն ունեցող երկու բնորոշ փաստերի մասնանշումով: Այսպես, Վրթանես վարդապետ Աշտարակեցու նամակներից իմանում ենք, որ Բաղդադի անգլիական դեսպանը 1810 թվականին նույնիսկ զբաղվել է Հակոբ արքեպիսկոպոսի աճյունի տեղափոխման հարցով: Այդ առթիվ էջմիածին ուղարկած իր նամակում Վրթանեսը գրել է. «Անգլիացուց աղզին դեսպանն ի մէջ այլ բազմապատիկ բարերարութեանց... նա առ աղինս մեր արարելոց զգերազանցն արար յայտասիկ աւուրս. հրամանաւ քաղաքիս (Բաղդադի) բզեշխին, զկնի շորից ամսոց զպարկեշտակենցաղ մարմինն (Յակոբայ արքեպիսկոպոսի), զոր վասն խառնակութեանց ժամանակին լայնորիկ, զայն մարմինն բարեյիշատակ սրբազանի իմոյ ի հասարակ գերեզմանս արտաքոյ քաղաքին թաղեալ էար, հոշակաւոր պատուով ի քաղաք բերեալ՝ փառաւորապէս յեկեղեցին թաղելով...»²⁵: Այնուհետև Վրթանեսը խնդրել է «օրհնութեան և երախտագիտութեան ոսկեզօծ և գեղեցկագիր նամակ» ուղարկել դեսպանի անունով²⁶: Երկրորդ՝ ինչպես երևում է ներկա Ուղեգրության առաջարանից, նույն դեսպանը խնամքով նախապատրաստել, անգլիական դրոշի ներքո, Սերովրե Կարնեցի և Վրթանես Աշտարակեցի վարդապետների ուղեկցությամբ էջմիածին է ուղարկել Հակոբ նվիրակի կուտակած մեծ հարստությունները: Սրանք ոչ պատահական էին և ոչ էլ հայերի նկատմամբ անգլիացիների ունեցած «բարյացակամ» վերաբերմունքի արդյունք, այլ ժեստ՝ սիրաշահելու համար հայ ազգեցիկ շրջաններին, իրենց իսկ անգլիացիների հետոն գնացող գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին: Դա, համենայն դեպս, բխում էր Անգլիայի արևելյան քաղաքականությունից, որի իրականացման համար, անտարակույս, որոշ հույսեր էին կապվում նաև Սերովրե Կարնեցու առաքելության հետ:

Սերովրե Կարնեցին մի քիչ այլ կերպ է բացատրում էջմիածին գնալու իր նպատակները: Այսպես, Հնդկաստանում բնակվող մի հայ բանասերի՝ Հարություն Սահակյան Նոր Զուղայեցի Աղանուրջանցին հղած նամակում նա հազորդում է, որ ինքը պատրաստվում է էջմիածին գնալ. «ուր գուցէ ի հոգևոր տեսանէն ընկալայց զտպարանն... հանգուցեալ Յովսէփ կաթողիկոսին, որ ի Ռուսաստան», որպեսզի էջմիածնում կազմակերպի տպագրական գործը: Այնուհետև նա գրում է. «Ըսպասեա ուրեմն եթէ հաճիս, զի կատարել այսորիկ կարի հնարաւոր խորհրդոյս գոնէ մատեանք քո վայելչական տպագրութեամբ ի լոյս ընծայեսցին»²⁷:

էջմիածին հասնելուց մեկ տարի հետո՝ 1813 թվականի հունիսի 22-ին իր այս մտադրության մասին Քիֆլիսից նա գրել է նաև Մոսկվա՝ Հովակիմ Լազարյանին: Այդ նամակում կարդում ենք. «Ակն ունիմ, եթէ վեհազնութիւնդ յատուածարեալ գրուածոց գերերջանիկ սրբազան հոգևոր Տեսոն մերոյ ունիք բաւական տեղեկութիւն զանձինս հանգամանաց ի վաղուց հետէ ստացեալ:

²⁵ Կաթողիկոսական դիվան, թղթ. 22, վավ. 18:

²⁶ Նույն տեղում, թղթապ. 19, վավ. 8:

²⁷ Նույն տեղում:

ուրեմն յայտորիկ կրկնութենէ լաւ ևս է ինձ ի բաց հրածարիլ. զայս միայն այժմ ձերումդ վեհագնութեան ծանուցեալ, եթէ երկու ամսօր յառաջ ի սրբազնակատար վեհապետէ մերմէ առաքեցայ աստ. և ունիմ ժամանակ ինչ բնակիլ ի Թիֆլիզ. մինչև Աստուած այց արասցէ տառապեալ Մօր Արոռայ մերոյ, որս վիճակն այժմեան, ըստ որոյ բազ գիտակ է՛, է կարի ողբալի: Համանգամայն ի հարկէ վերահասու լեալ էք փոքր ի շատէ, թէ քանի ըղձակերտ ևմ ըստ իմումս կարեաց ի ձեռս բերել զտպարան իմն կանգնեալ բնդ հովանաւորութեամբ հզօր և բարեփափար իշխանի ուրուք. ուրանօր կարօղ լիցիմ ամենևին հանդարտութեամբ փութաշան վաստակօք ի լոյս բնծայել ի մէջ օրհնեալ ազգի մերում գեղեցկիմաստ և ուսումնասիրական գրեանս. զմեծագոյն մասն թարգմանեալս ի գաղղիացոց, յանդղիացոց, յիտալացոց և ի լատինաց գիտնական լեզուացն (զորոց գրաւական տեղեկութիւնն պարգևեալ է ինձ աստուած), որով մարքասցի ազգս մեր ի խորին բուն տգիտութեան տակալին ննչեալ բանալ զաչս մաաց, և նանաչել զիսկական գիւր եղելութիւնն և զանսղտոր այսորիկ կենաց երջանկութիւնն բանական կարողութեամբ ամենևին ծառայել աստուծոյ և կենցաղավարեալ յայսմ աշխարհի»²⁸:

Այս հարցերը, սրբան հետաքրքիր են, նույնքան էլ կարոտ են համակողմանի ուսումնասիրութեան: Այստեղ ասենք միայն, որ Սերովրե Կարնեցին շուտով տեղափոխվում է Մոսկովա և նշանակվում կազարյան ճեմարանի առաջին ռեկտոր: Ի դեպ՝ կազարյան ճեմարանի գոյութեան առաջին 50 տարիներին պաշտօնավարած տեսուչների և ռեկտորների թվում Սերովրե Կարնեցին ճանաչվել է ու գնահատվել որպես «ականավոր ռեկտոր»²⁹:

Այդ մասին վկայում են նաև Հովհաննես և Խաչատուր կազարյան եղբայրները: 1827 թվականի հունիսի 18-ին նրանք Պետերբուրգից Թիֆլիս՝ Ներսես Աշտարակեցուն հղած նամակում գրել են. «Գրաբերս այս բարձր արժանապատիւ Սերովրէ վարդապետ սիրեցեալն մեր՝ գոլով հրաւիրեալ ի հանգուցեալ ծնողէ մեր յառաջս յուսուցանել զմանկունս ուսումնարանի մեր ի Մոսկով՝ ամենայն ջերմեռանդութեամբ և զարգացմամբ հանապազօրդեալ զայն պաշտոն իւր զամս եօթն...»³⁰: Ահա հենց այստեղ էլ՝ կազարյան ճեմարանում, ուսումնական պրակտիկ աշխատանքների հետ միաժամանակ նա զբաղվել է նաև գիտական գործունեութեամբ:

Առ այսօր հայագիտական աղբյուրներում Սերովրե Կարնեցին հիշատակվել է միայն իբրև հայկական դպրոցների համար կազմած ու 1819 թվականին Մոսկովայում լույս տեսած «Ծաղիկ գիտութեանց» խորագրով ստվարածավալ աշխատութեան հեղինակ³¹: Սակայն այս տեղեկությունները խիստ թերի են ու պակասաւոր: Ինչպես վերը ակնհերե դարձավ, Սերովրե Կարնեցու գրչին է պատկանում ներկա Ուղեգրությունը: Ավելին. պարզվում է նաև, որ Սերովրե Կարնեցին հրատարակութեան համար պատրաստած է եղել նաև «Մահմեդի պատմութիւն» վերնագրով ընդարձակ մի ուսումնասիրություն՝ շարագրված պատ-

²⁸ Նույն տեղում, կազարյանների արխիվ, թղթպ. 104, գ. 8, վավ. 148:

²⁹ А. Зинovieв, Историческ. очерк Лазаревскаго института восточных языков, 1863, Москва, էջ 103:

³⁰ Մատենադարանի արխիվային բաժին, կազարյանների արխիվ, թղթպ. 104, գ. 5, վավ. 243:

³¹ Գ. Ջաբր հանալյան, Հայկական մատենագիտութիւն, 1883, Վենետիկ, էջ 283, Ն. Ղազարիյան, Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի..., Վենետիկ, 1909—12, էջ 1204, և որիչներ:

մական փաստերի հիման վրա, հեղինակի իսկ վկայությամբ՝ «զոր աւանդին ամենայն զրիչք մեր և օտարք»³²: Նկատենք, որ այս ուսումնասիրության առաջին մի քանի տետրակները ոչ միայն տպարանում շարված են եղել, այլև տպագրված մամուլները պատրաստ են եղել կազմելու համար: Հեղինակը էջմիածին՝ Եփրեմ կաթողիկոսին է ուղարկել իր գրքի տպագրված ավելի քան 160 էջերը, որպեսզի վերջինս տա իր համաձայնությունը այն լույս աշխարհ հանելու համար: Մակայն այդ գրքի լույս ընծայումը արգելում է հենց էջմիածինը:

1820 թվականի հունվարին Եփրեմ կաթողիկոսը Մոսկվա, Սերովրե Կարնեցուն ուղարկած իր պատասխան նամակում գրել է. «զի որպիսայայտ գիրքս ընդ ծաղկափունջ գիտելեաց բազմաց ի մասնաւորի, զորս փնջեալ էր քո աշխատասիրութեամբ ի միում գրբական և ի տիպ իսկ արձանացեալ. թէև թերապէս տակաւին հաս ի ձեռս մեր, առ որ թախանձեալ սրտիւ հոտտեցար ըստ ազգս ազգս իւրաքանչիւր որ ծաղկանց ընթերցանութեամբ և զտաք ի նոսա ինչ ինչ մեր և սինօթ սուրբ մեծի աթոռոյս որոց վասն ի ճահ երեկ ասել ինչ, որով մնալ համարիմք անբամբաս և անվրդով ազգովին»: Սրան հետևում են «Պատմութիւն Մահմեդի» աշխատության վերաբերյալ Եփրեմի հինգ դիտողությունները: Այնուհետև Եփրեմը հանդիմանում է Սերովրե Կարնեցուն, որ առանց նախօրոք համաձայնեցնելու տպագրության է հանձնել այս գործը, ուստի և ինքը արգելում է դրա լույս ընծայումը: Վերջացնելով իր թուղթը, Եփրեմը նաև մխիթարում է հեղինակին՝ «Իսկ յաղագս յամեցման պատասխանուոյս մի լիցի բեղ ամբոխիլ կամ դժուարիլ իւր. այն զի դամազամ հոգօք ներբինք և արտաքինք յոր ընկղմեալս կամք բոլորովին, գրէթէ բազմաց լինին գործոց և պատասխանեաց խափանիչք կամ յամեցուցիչք»³³:

Ապարդյուն անցան նաև Սերովրե Կարնեցուն՝ այդ ժամանակ էջմիածնի գործերում վճռական դեր խաղացող ներսես Աշտարակեցուն արած խնդրանքները՝ գրքի լույսընծայմանը օգնելու մասին: Այդպես էլ այդ գիրքը լույս աշխարհ չեկավ: Ի՞նչ եղան այդ ուսումնասիրության տպագրված տետրակները, ինչպես և հեղինակի ձեռագիրը, առ այսօր մնում են անհայտ^{33ա}:

Եփրեմ կաթողիկոսի Մոսկվա, Հովակիմ Լաղարյանին հղած 1817 թվականի մարտի 5-ի նամակից իմանում ենք նաև այն մասին, որ Ռուսաստանի ցարական կառավարության դավանանքների և լուսավորության մինիստր կրնյազ Ալեքսանդր Նիկոլաևիչ Գուլիցինը՝ «առաջարկեալ է յիշեալ Սերօքէ վարդապետին թարգմանել զնոր կտակարանն հայոց ի տաճկական բարբառ առ ի դիւրիմաց լինելոյ այնց հայոց, որք մտացեալ զհայրենի լեզու իւրեանց, վարին տաճկական լեզուաւ»³⁴:

Բացի այդ, այժմ պարզվում է նույնպես, որ Սերովրե Կարնեցին, էրբ իրազեկ է դառնում Հնդկաստանում Ղուկասի ավետարանը շափածոյի վերածելու մասին, պատրաստակամություն է հայտնում գրելու դրա առաջարանը: Այդ գործի հեղինակ, Հնդկաստանի Բոմբեյ բաղաբում բնակվող հայ բանասեր Հա-

32 Մատենադարանի արխիվային բաժին, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 158, վավ. 160:

33 Նույն տեղում, Կաթողիկոսական գիվան, թղթ. 36, վավ. 23:

33ա. Մանոթ շինելով այս փաստին, Սերովրե Կարնեցու «Պատմութիւն Մահմեդի» գրած ուսումնասիրությունից շուրջ մեկ հարյուրամյակ հետո, բանասեր Բ. Կյուլենբերյանը 1925—1926 թվականներին «Հանդէս ամսօրեայում» (N 5—6, էջ 256) հրատարակած «Իսլամը հայ մատենագրության մեջ» հոդվածաշարում իր արածը զնահատել է որպես «նորություն մը հայ մատենագրության բոլորովին անկախ մի մարզին վրա...»:

34 Մատենադարան, Լաղարյանների արխիվ, թղթ. 193, գործ 9, վավ. 10:

րություն Սահակյան — Աղանուրյանցին 1811 թվականին Բաղդադից գրած նամակում կարդում ենք. «Եթէ հաստատեալ ես տպագրութեամբ ի լոյս բնծայել զՂուկասու շախմատերական աւետարանդ յայտնեա ինձ պարզապէս զնիւթ առաջարանութեան գործոյդ, քանզի ցանկամ նուաստս ի սէր պատուական անձիդ հիւսել զհամառօտ յառաջարանութիւն համամիտ մտոյդ և զուցէ արժանաւոր մատենանիդ»³⁵: Իրականացրել է արդյոք յուր այս մտահղացումները Սերովբե Կարնեցին, — առայժմ դժվար է տեսլ: Սակայն անկախ դրանից, նըշված փաստերը վկայում են նրա մտավոր կարողությունների մասին: Ուստի պատահական չի կարելի համարել, որ ժամանակի հայ աշխարհիկ ու հոգևոր աշխատավոր գործիչները, օտար պետությունների բարձրաստիճան պաշտոնյաները իրենց գրագրություններում մեծ ակնածանքով են խոսում Սերովբե Կարնեցու մասին, բնութագրելով նրան՝ «ժողկածին գրասէր», «գիտնական», «պիւր ճիմաստ բարունի» և այլ մակդիրներով³⁶, իսկ Հայաստան այցելած օտար ճանապարհորդները իրենց ուղեգրություններում նրա մասին գրել են. «այր գիտնական՝ որ ուսմամբ իւրով գերազանցէր քան զայլ ամենայն կարգակիցս իւր»³⁷:

* * *

Ուղեգրությունն ընթերցողին անշուշտ կհետաքրքրի այն հարցը, թե ինչու նրա հեղինակը՝ Սերովբե Կարնեցին, որը քաջ գիտակ է եղել մայրենի լեզվին, իր գործը գրել է օտար լեզվով՝ ֆրանսերեն: Այդ հարցի պատասխանը տվել է ինքը՝ հեղինակը Ուղեգրության առաջարանում. Սերովբե Կարնեցին Հայաստան էր գալիս անգլիական անձնագրով, որպէս Հնդկական առևտրական ընկերության հանձնակատար: Ավելին, նա ճանապարհ է դուրս գալիս Բաղդադից զեպի էջմիածին «Մօսկոր» կեղծանունով³⁸: Ուստի բնական է, որ ճանապարհորդության ընթացքում օրը օրին գրի առնված գեպքերը շէր կարելի գրել հայերեն, որը կմասնէր հեղինակի ազգային պատկանելությունը:

Երկրորդ հարցը, որ էական նշանակություն ունի, Ուղեգրության նպատակագրումն է, և, որ կարևորն է, դրա իրականացումը: Հեղինակը իր գործի առաջարանում նշում է, որ «Աշխարհի տարրեր մասերում կատարված ուղևորությունների նկարագրությունները միշտ էլ նպաստել են հարստացնելու պատմությունն ու աշխարհագրությունը նորանոր տեղեկություններով»: Հենց այս մտասեւումամբ էլ հեղինակը գրում է իր Ուղեգրությունը:

Որպէս սկանասեսի գրչի արդյունք, Ուղեգրությունը, անտարակույս, ունի անվիճելի առավելություններ: 55 օր տևող ճանապարհորդության ընթացքում Ուղեգրության հեղինակը անցել է Իրաքի, Պարսկաստանի ու Թուրքիայի տիրապետության տակ գանձող քաղաքների ու գյուղերի միջով: Նշենք, սակայն, որ հեղինակը չի բավարարվել իր տեսած ու լսած փաստերի միայն արձանագրումով, այլև հաղորդում է պատմական, ազգագրական և աշխարհագրական շատ տեղեկություններ իր անցած ճանապարհին՝ հանգիպած ցեղերի ու ժողո-

35 Նույն տեղում, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 19, վավ. 8: Մատնացույց արվող շախմատի վերածված Ղուկասի ավետարանը ձեռագիր վիճակում պահվում է Մաշտոցյան մատենադարանում N 169-ի տակ:

36 Կաթողիկոսական դիվան, թղթ. 36, վավ. 23: Լաղարյանների արխիվ, թղթ. 104, գործ 8, վավ. 118, ֆոնդ Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 67 և այլն:

37 Ե ա շ ա տ ու ռ Ա Ր Ո Վ Յ Ա Ն, Երկերի լիակատար ժողովածու, 1956, Երևան, հ. 7, էջ 308:

38 Կաթողիկոսական դիվան, թղթ. 23, վավ. 59:

վարդների կենցաղի և սովորույթների, մասնավորապես այդ վայրերում ապրող հայկական բնակավայրերի, դրանց բնակչության թվի, զբաղմունքի, հարևան ժողովուրդների հետ ունեցած հարաբերությունների, ինչպես և տիրող քաղաքական իրադրության, սոցիալական երևույթների և այլնի մասին: Նկատենք, որ Իրաքից՝ Պարսկաստանի և Քուրդիայի տերիտորիաներով նրա անցած ու նկարագրած ճանապարհը մինչ այդ դեռ քիչ էր արտրված եվրոպացի ճանապարհորդների կողմից:

Սերովբե Կարնեցու նորահայտ այս Ուղեգրությունը իր բովանդակությամբ հարուստ տեղեկություններ պարփակելով՝ Մերձավոր Արևելքի վերաբերյալ, անշուշտ, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, և սկզբնաղբյուր է ինչպես հայագետների, այնպես և արևելագետների համար:

А. ХАЧАТРИАН, Л. ХАЧЕРЯН

ПУТЕВЫЕ ЗАПИСКИ СЕРОВБЕ КАРНЕЦИ

Р е з ю м е

В архивном отделе Матенадарана хранятся путевые записки, изложенные на французском языке. Автор этих записок подробно описал этапы совершенного им путешествия из Багдада в Эчмиадзин. Произведя филологические изыскания, авторы статьи обнаружили, что автором «Путевых записок» является известный церковный и литературный деятель и педагог первой половины XIX в. Серовбе Карнеци.

Он предпринял это путешествие инкогнито, рекомендуясь англичанином, комиссионером индийской торговой компании, чтобы иметь возможность перевезти через Ирак, Персию и Турцию в Эчмиадзин огромные материальные ценности, принесенные индийскими армянами в дар Эчмиадзинскому собору.

Путевые записки содержат сведения по истории, этнографии и географии.

H. KHATCHATRIAN, L. KHATCHERIAN

LA RELATION DE VOYAGE DE SÉROVBÉ KARNÉTSI

Le Fonds des Archives du Maténadaran renferme une relation de voyage détaillée en français, datant de 1812 et concernant l'itinéraire suivi de Bagdad à Etchmiadzine.

Les auteurs du présent article en ont déterminé l'auteur qui n'est autre que Sérovbé Karnétsi, homme d'Eglise, littérateur et pédagogue célèbre de la première moitié du XIX^e siècle, qui, dans le but de faciliter son voyage à travers l'Irak, la Perse et la Turquie à destination du couvent d'Etchmiadzine auquel il devait remettre de la part des Arméniens de l'Inde des présents de grande valeur, prit le travesti d'un agent anglais de la Compagnie des Indes.

Ladite relation fournit des renseignements d'ordre historique, géographique et ethnographique.